



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

22 հունվարի 2018թ. թիվ 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ  
ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ, ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.22 կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի №46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի նիստի №45 արձանագրային որոշման 5-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 22.01.2018թ. N 1/17.1/580-18 գրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի կազմակերպական ցուցումներն ու ուղղությունները՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մինչև 2018 թվականի փետրվարի 16-ը սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով հաստատված հավելվածների համաձայն մշակել, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության

փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համաձայնեցնել ու հաստատել համայնքի արտակարգ իրավիճակներում քնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018 թվականի նախապատրաստման կազմակերպական ցուցումները, ուղղությունները և հիմնական միջոցառումների պլանը:

2) մինչև 2018 թվականի նոյեմբերի 23-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել տեղեկատվություն սույն որոշման համաձայն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

3. Հանրապետական գործադիր մարմինների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում գործող տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև 2018 թվականի նոյեմբերի 23-ը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել տեղեկատվություն սույն որոշման համաձայն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

5. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2018թ. հունվարի 22  
ք.Վանաձոր



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ